

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ ԺԱՄԸ
16:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ
ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան
Մասնակցում էին՝

- | | |
|---------------|--|
| Հ. Նաղդալյան | - ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր |
| Կ. Կիրակոսյան | - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ |
| Կ. Մինասյան | - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Ռ. Ալավերդյան | - ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ |
| Ջ. Հակոբյան | - ՀՀ Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության պետ |
| Լ. Ղազարյան | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի վարչության պետ |
| Շ. Ասոյան | - ՀՀ մշակույթի նախարարության մշակութային արժեքների պահպանության գործակալության պետ |
| Ն. Դուրյան | - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ՔՎ-ի 3-րդ վարչության պետ ,ոստիկանության գնդապետ |
| Ա. Թանաշյան | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ (հրավիրված) |
| Ռ. Յուզբաշյան | - ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման |

	վարչության առաջնային բուժօգնության բաժնի վարիչ
Գ. Սողոմոնյան	- Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ
Ն. Հովհաննիսյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության պետ
Զ. Հասրաթյան	- Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ
Ա. Գևորգյան	- Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ
Գ. Միրզոյան	- <Զինվորի մայր> Հ/կ-ի նախագահ
Յ.Գևորգյան	- Վաճառականների միության նախագահ
Ն. Մարտիրոսյան	- <<Միկա-ցեմենտ>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Ռ. Ծառուկյան	- <<Գ.Կ. Ծառուկյան>> ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Ասլանյան	- Հայաստանի մայրության ֆոնդի նախագահ
Ա. Ժամակոչյան	- <<Դեմոկրատիայի դպրոց ակումբ, սոցիոլոգ փորձագետ <<Կանանց հանրապետական խորհուրդ>> հասարակական կազմակերպության նախագահության անդամ
Կ.Սուջյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչություն, մարդու իրավունքների բաժնի վարիչ (հրավիրված)
Գ. Հայրապետյան	- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (հրավիրված)
Ա. Սիմոնյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ք. Ասրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ, ՀՀ կառավարության աշխատակազմում ՀՀ վարչապետին կից կանանց հարցերով խորհրդի համակարգող

1. «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում

(Լ. Ղազարյան, Գ. Հայրապետյան, Տ. Սարգսյան)

Քննարկումից հետո որոշվեց՝ հավանություն տալ ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծին:

2. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում

(Լ. Ղազարյան, Գ. Հայրապետյան, Զ. Հասրաթյան, Հ. Նաղդալյան,
Կ. Սուջյան Տ.Սարգսյան)

Քննարկումից հետո որոշվեց՝ հավանություն տալ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծին:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետին կից կանանց հարցերով խորհրդի աշխատանքային խմբերի ծրագրերի ներկայացում

(Գ. Սողոմոնյան, Զ. Հասրաթյան, Հ. Նաղդալյան, Գ. Միրզոյան, Տ.Սարգսյան)

Քննարկումից հետո որոշվեց՝ հանձնարարել աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ 2011 թվականի աշխատանքային ծրագրերը մեկամսյա ժամկետում ներկայացնել ՀՀ վարչապետին:

4. Սոցիալ-տնտեսական հարցերի և առողջապահության աշխատանքային խմբի
ղեկավարի մասին

(Ս. Ասլանյան, Լ. Ղազարյան, Տ.Սարգսյան)

Քննարկումից հետո որոշվեց՝ սոցիալ-տնտեսական հարցերի և առողջապահության
աշխատանքային խմբի ղեկավար ընտրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի
վարչության պետ Լալա Ղազարյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏ

Ս. ՍԻՄՈՆՅԱՆ